ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԾՁԲ-2021/1»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2020 թվականի դեկտեմբերի 04-ին** կնքված N **«ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԾՁԲ-2021/1»** պայմանագրում **2021 թվականի հունվարի 08-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցումն իրականացնելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, 04.12.2020թ. կնքված N «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԾՁԲ-2021/1» գնման պայմանագրի 7.5-րդ և 7.13-րդ կետեր, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ**